

ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

« _____ » _____ թ.

վայրը _____

, որը բնակվում է _____

ազգանունը, անունը
հասցեում, անձնագրի սերիան _____ թիվ _____, տրված _____
կողմից « _____ » _____ թ., այսուհետ՝ «Նվիրատու», մի կողմից, և _____,

որը բնակվում է _____ հասցեում, անձնագրի սերիա _____ թիվ _____,
տրված _____ կողմից « _____ » _____ թ., այսուհետ՝ «Նվիրառու», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Նվիրատուն պարտավորվում է նվիրառուի սեփականությանն անհատույց հանձնել թիվ 1 հավելվածում նշված գույքը:

1.2. Թիվ 1 հավելվածը սույն պայմանագրի անբաժանելի մասն է:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Նվիրատուն պարտավոր է՝

2.1.1. սույն պայմանագիրն ստորագրելու պահից _____ օրվա ընթացքում Նվիրառուին հանձնել թիվ 1 հավելվածում նշված գույքը: Գույքը հանձնվում է _____:

2.1.2. հատուցել նվիրված գույքի թերությունների հետևանքով Նվիրառուին պատճառված վնասը, եթե ապացուցվում է, որ այդ թերություններն առաջացել են մինչև գույքը Նվիրառուին հանձնելը, և Նվիրատուն, դրանց մասին իմանալով, չի նախագուշացրել Նվիրառուին:

2.2. Նվիրատուն իրավունք ունի՝

2.2.1. հրաժարվել Նվիրառուին գույք փոխանցելու խոստումը կատարելուց, եթե պայմանագիրը կնքելուց հետո Նվիրատուի գույքային կամ այլ դրույթունը այնքան է վատթարացել, որ նոր պայմաններում պայմանագրի կատարումը կառաջացնի նրա կենսամակարդակի էական իջեցում:

2.2.2. վերացնել նվիրատվությունը, եթե Նվիրառուն ոտնձգություն է կատարել Նվիրատուի, նրա ընտանիքի անդամներից կամ մերձավոր ազգականներից որևէ մեկի կյանքի դեմ, այդ դեպքում, եթե Նվիրատուն մահացել է, դատարանում նվիրատվությունը վերացնելու պահանջի իրավունք ունեն Նվիրատուի ժառանգները:

2.3. Նվիրառուն իրավունք ունի մինչև նվերն իրեն փոխանցելը գրավոր հրաժարվել դրանից: Նվիրառուի հրաժարականի առկայության դեպքում նվիրատվության պայմանագիրը համարվում է լուծարված:

2.4. Նվիրառուն պարտավոր է նվիրատվության վերացման դեպքում վերադարձնել Նվիրատուի նվիրած գույքը, եթե այն բնեղենով պահպանվել է նվիրատվության վերացման պահին:

3. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծարել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տև յակ պահելով մյուս կողմին:

4. Այլ պայմաններ

4.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և դադարում է պատշաճ կատարմամբ:

4.2. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4.3. Սույն պայմանագրի փոփոխությունները և լրացումները կատարվում են գրավոր՝ կողմերի ստորագրմամբ:

5. Կողմերի հասցեները, վավերապայմանները և ստորագրությունները

Նվիրատու

ստորագրություն

Նվիրառու

ստորագրություն